# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 14-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/23»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Ջրավազանային կառավարման պլանների մշակման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/23» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026 թվականի մայիսի 14-ին ժամը 14:19:03-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի մայիսի 15-ին ժամը 10:00-ին տրամադրված պարզաբանումը՝

**Հարցադրում N 1:** Մասնակցության հավասար իրավունքի և անբարեխիղճ մրցակցության վերաբերյալ Հրավերի 2-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ ունի ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Հարց. Ինչպե՞ս է Պատվիրատուն ապահովելու մրցակցության հավասար պայմաններ այն մասնակիցների համար, որոնք ստիպված են լինելու պաշտոնական գնացուցակով գնել տվյալները, այն կազմակերպությունների համեմատ, որոնք կարող են ունենալ արտոնյալ (անվճար) հասանելիություն այդ տվյալներին: Օրենքով սահմանված է ցանկ պետական կառույցների և կազմակերպությունների, որոնք կարող ենք անվճար ունենալ տվյալներ, ինչպես նաև Օրենքով թույլատրված է պետական կառույցների և կազմակերպությունների ծավալել ձեռնարկատիրական գործունեություն: Արդյո՞ք կարող է ապահովվել, որ սա չհանգեցնի անբարեխիղճ մրցակցության, ինչն արգելված է հրավերի 2.1 կետի 3-րդ ենթակետով:

**Պարզաբանում N 1:** «Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի՝ «Գնումների մասին» օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/23» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին:**

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/23» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով